## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

***Հաշվի առնելով,*** որ Կողմերն ընդունում են հրաձգության ռազմավարական նշանակությունը,

***Ձգտելով*** զարգացնել համագործակցությունը հրաձգության որակյալ մասնագետների պատրաստման և մարզաձևի մասսայականացման միջոցով,

***Կարևորելով*** դիմորդների հետաքրքրության բարձրացումը դեպի հրաձգություն մարզաձևը, ինչպես նաև դրա իրականացման համար գրավիչ պայմանների ստեղծումը,

***Ընդունելով*** Կողմերի պատրաստակամությունը կրթական, մարզական միջոցառումների համատեղ իրականացման համատեքստում,

***Հիմք ընդունելով*** սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

***Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝***

### 1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

### 2. Համագործակցության ուղղությունները

Սույն հուշագրով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Հայաստանի հրաձգության ֆեդերացիա» հասարարական կազմակերպությունը (այսուհետ՝ Ֆեդերացիա) պատրաստակամ են.

2.1 պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք թույլ կտան զարգացնել հրաձգությունը և դրա տարածվածությունը ոչ միայն ուսանողության, այլև բնակչության լայն շրջանում

2.2 փոխադարձ աջակցության ցուցաբերել մարզական, կրթամարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում

2.3 ուսանողների մասնակցության ակտիվության խթանման նպատակով տեղեկատվական միջոցառումներ կազմակեպել, ստեղծել մասնակցության նպաստավոր պայմաններ

2.4 Կողմերը երկուստեք պատրաստակամ են նաև.

2.4.1 համագործակցել նորարարական, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ

2.4.2. օգտագործել Ֆեդերացիայի տարածքները Ինստիտուտի պրակտիկ դասերի իրականացման համար

2.4.3 ներգրավել Ֆեդերացիայի մասնագետներն հրաձգության դասերի անցկացման նպատակով.

2.4.4 համագործակցել Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.4.5 համագործակցել երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի մշակման և իրականացման շուրջ

2.4.6 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցել և ստանալ

2.4.7 կազմակերպել Ֆեդերացիայում ուսանողների պրակտիկան

2.4.8 ներգրավել Ֆեդերացիային Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում

2.4.9 սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համագործակցել Կողմերի տարածքների, գույքի օգտագործման շուրջ:

## 3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, փոխադարձ հարգանքի և վստահության, համագործակցության սկզբունքներով:

## 4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար: Սույն հուշագիրը մտադրությունների մասին համաձայնություն է, ինչը պարունակում և հաստատում է Կողմերի համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը: Միաժամանակ Կողմերը ընկալում և հաստատում են, որ սույն հուշագրի դրույթները չունեն Կողմերի համար պարտադիր իրավաբանական ուժ:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2021թ. մարտի 31–ին:

4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

### Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

| **Ինստիտուտ** | **Ֆեդերացիա** |
|---|---|
| «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ | «Հայաստանի հրաձգության ֆեդերացիա» ՀԿ |
| ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11 | ՀՀ, ք. Երեւան, Վիլնյուսի 4/3 |
| Ռեկտոր՝ Դավիթ Սիրադեղյան | Նախագահ՝ Արթուր Հովհաննիսյան |
| ստորագրություն, Կ.Տ. | ստորագրություն, Կ.Տ. |